

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 18

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻԶԵՎԱՆԻ  
ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

10.09.2016թ.

ք. Իջևան

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 35 անդամներից 28-ը:

Նիստը վարում էր գիտական խորհրդի նախագահ Ս. Ա. Առաքելյանը:

Տնօրեն Ս.Ա. Առաքելյանը բացելով գիտական խորհրդի նիստը հայտատարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը:

### Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի 2016-2017 ուստարվա 1-ին կիսամյակի նիստերի ժամանակացույցի հաստատում: (Ձեկուցող Ս.Ա.Առաքելյան)
2. ԵՊՀ ԻՄ-ի 2017թ. ընդունելության մասնագիտությունների ըստ կրթական ծրագրերի ցանկի քննարկում: (Ձեկուցող Ս.Ա.Առաքելյան)
3. ԵՊՀ ԻՄ 2016-2017 ուստարվա 1-ին կիսամյակի ուսման վարձերի չափն ըստ մասնագիտությունների և կրեդիտների հաստատում: (Ձեկուցող Ս.Ա.Առաքելյան)
4. ԵՊՀ ԻՄ առկա և հեռակա ուսուցման ուսումնական աշխատանքների հաշվարկի նորմերի հաստատում: (Ձեկուցող Ս.Ա.Առաքելյան)

5. 2016-2017 ուստարվա 1-ին կիսամյակի անվանական կրթաթոշակների հաստատում: (Զեկուցող Ս.Ա. Առաքելյան)

6. Ընթացիկ հարցեր

6.1. ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի հումանիտար գիտությունների ֆակուլտետի հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնի դոցենտ, պատմական գիտությունների թեկնածու Վարդան Արամայիսի Ալեքսանյանին ԵՊՀ գիտական խորհրդում դոցենտի գիտական կոչում ստանալու համար երաշխավորելու և միջնորդելու մասին:

Գիտխորհրդի անդամների կողմից օրակարգի համար այլ հարց չառաջարկվեց և մասնակիցների բաց քվեարկությամբ ընդունվեց նիստի օրակարգը:

*Օրակարգի առաջին՝* «ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի 2016-2017 ուստարվա 1-ին կիսամյակի նիստերի ժամանակացույցի հաստատում» հարցի կապակցությամբ լսեցին ԵՊՀ ԻՄ-ի տնօրեն Ս.Ա. Առաքելյանի հաղորդումը: Նշվեց, որ գիտական խորհրդի հաստատմանն ներկայացված 2016-2017 ուստարվա առաջին կիսամյակի գիտխորհրդի նիստերի ժամանակացույցի նախագիծը կազմվել է հիմք ընդունելով ԵՊՀ ԻՄ ռազմավարական ծրագիրը, ԵՊՀ գիտական խորհրդի ժամանակացույցը, ուսումնական ժամանակացույցները, խորհրդակցվել է ԵՊՀ ԻՄ-ի բոլոր ստորաբաժանումների ղեկավարների հետ:

*Արտահայտվեցին* – Ուսումնամեթոդական վարչության պետ Ա. Դավթյանը, գիտական քարտուղար Մ. Աթոյանը, ստորաբաժանումների ղեկավարները:

Ելույթ ունեցողները հավանություն տվեցին և առաջարկեցին հաստատել գիտական խորհրդի 2016-2017 ուստարվա առաջին կիսամյակի նիստերի ժամանակացույցը:

### ***Որոշեցին***

#### **Որոշում 18/1**

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 28-րդ կետի 2-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 16-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

Հաստատել ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի 2016-2017 ուստարվա առաջին կիսամյակի նիստերի ժամանակացույցը, համաձայն հավելված 1-ի:

**Օրակարգի երկրորդ՝** «ԵՊՀ ԻՄ-ի 2017թ. ընդունելության մասնագիտությունների ըստ կրթական ծրագրերի ցանկի քննարկում» հարցի կապակցությամբ լսեցին տնօրեն Ս. Ա. Առաքելյանի հաղորդումը: Նա ներկայացրեց ցանկը (հավելված 2), և հիշեցրեց, որ 2016թ. հուլիսի 09-ին կայացած գիտական խորհրդի նիստում այս հարցը բավականին լուրջ քննարկման առարկա էր դարձել, որին մասնակցում էին նաև ԵՊՀ-ի ռեկտոր Ա. Հ. Սիմոնյանը, ԵՊՀ-ի ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ա. Գրիգորյանը, ուսումնամեթոդական վարչության պետ Հ. Ժամհարյանը, ուսանողների, շրջանավարտների և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտոր Ռ. Մարկոսյանը, ռեկտորի աշխատակազմի ղեկավար Ա. Ղարիբյանը: Այդ նիստում որոշում էր կայացվել հանձնարարել ուսումնամեթոդական վարչությանը հստակեցնել առաջարկվող մասնագիտությունների ցանկը և ներկայացնել առաջիկա գիտխորհրդի քննարկմանը: Տնօրեն Ս. Ա. Առաքելյանը նշեց, որ այս ցանկը կազմվել է հաշվի

առնելով ինչպես աշխատաշուկայի զարգացման տենդենցները, այնպես էլ ԵՊՀ Իմ-ի արտաքին շահակիցների կարծիքները և հիմք է ընդունել 2016թ. հուլիսի 09-ին կայացած գիտական խորհրդի թիվ 17 նիսի քննարկումները:

**Արտահայտվեցին** - Ուսումնամեթոդական վարչության պետ Ա. Դավթյանը, բնական գիտությունների ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար Մ. Զաքարյանը, տնտեսագիտական ֆակուլտետի դեկան Ն. Խուդավերդյանը, հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար Ա. Ներսիսյանը, կիրառական արվեստի ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար Ա. Մարգարյանը:

Ելույթ ունեցողները հավանություն տվեցին նախագծին:

### ***Որոշեցին***

#### **Որոշում 18/2**

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 10-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 10-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հավանություն տալ ԵՊՀ ԻՄ-ի 2017թ. ընդունելության մասնագիտությունների ըստ կրթական ծրագրերի ցանկի նախագիծը համաձայն հավելված 2-ի:
2. Ներկայացնել ԵՊՀ գիտխորհրդի հաստատմանը:

**Օրակարգի երրորդ՝** «ԵՊՀ ԻՄ 2016-2017 ուստարվա 1-ին կիսամյակի ուսման վարձերի չափն ըստ մասնագիտությունների և կրեդիտների հաստատում» հարցի վերաբերյալ լսեցին տնօրեն Ս. Ա. Առաքելյանի հաղորդումը, նա ներկայացրեց նախագիծը համաձայն հավելված 3-ի, հիմնավորեց և առաջարկեց հաստատել:

**Արտահայտվեցին**, ուսումնական վարչության պետ Ա. Դավթյանը իրավախորհրդատու Ա. Հովհաննիսյանը, տնտեսագիտական ֆակուլտետի դեկան Ն. Խուդավերդյանը, հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար Ա. Ներսիսյանը: Ելույթ ունեցողները հիմնավոր համարելով փաստարկները առաջարկեցին հաստատել ներկայացվող նախագիծը:

### ***Որոշեցին***

#### **Որոշում 18/3**

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

Հաստատել ԵՊՀ ԻՄ 2016-2017 ուստարվա առաջին կիսամյակի ուսման վարձերի չափն ըստ մասնագիտությունների և կրեդիտների համաձայն հավելված 3-ի:

**Օրակարգի չորրորդ՝** «ԵՊՀ ԻՄ առկա և հեռակա ուսուցման ուսումնական աշխատանքների հաշվարկի նորմերի հաստատում» հարցի վերաբերյալ ԵՊՀ ԻՄ-ի տնօրեն Ս.Ա. Առաքելյանի հաղորդումը: Նա համառոտ ներկայացրեց ԵՊՀ ԻՄ առկա և հեռակա ուսուցման ուսումնական աշխատանքների հաշվարկի նորմերը համաձայն հավելված 4-ի, որտեղ կատարված փոփոխությունները պայմանավորված են ԵՊՀ – ի համապատասխան նորմերի փոփոխությունների հետ, ինչպես նաև ուսումնական պրոցեսը առավել արդյունավետ կազմակերպելու անհրաժեշտությունից ելնելով :

**Արտահայտվեցին** - Ուսումնամեթոդական վարչության պետ Ա. Դավթյանը, բնական գիտությունների ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար, Մ. Զաքարյանը: Ելույթ ունեցողները կարևորեցին կատարված փոփոխությունները և նշեցին, որ դրանք կնպաստեն ուսումնական գործընթացները առավել օպտիմալ կազմակերպելու համար:

### **Որոշեցին**

#### **Որոշում 18/4**

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

Հաստատել ԵՊՀ ԻՄ առկա և հեռակա ուսուցման ուսումնական աշխատանքների հաշվարկի նորմերը համաձայն հավելված 4-ի:

**Օրակարգի հինգերորդ**՝ «2016-2017 ուստարվա 1-ին կիսամյակի անվանական կրթաթոշակների հաստատում» հարցի կապակցությամբ տնօրեն Ս. Ա. Առաքելյանի հաղորդումը: Նա նշեց, որ ֆակուլտետների գիտական խորհուրդները քննարկել և գիտական խորհրդի հաստատմանն են ներկայացրել ԵՊՀ ԻՄ-ում գործող անվանական կրթաթոշակների հավակնող ուսանողների անունները:

Գիտխորհրդի հաստատմանն է ներկայացված հումանիտար գիտությունների ֆակուլտետի գիտական խորհրդի որոշումը՝ «Վազգեն Սարգսյան» անվանական կրթաթոշակի համար «Պատմություն» մասնագիտության երկրորդ կուրսի ուսանող Ալիխան Աշոտի Բալդրյանին, «Շառլ Ազնավուր» անվանական կրթաթոշակի համար «Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողուհի Վանուհի

Արամայիսի Վանեսյանին, «Դավիթ Անհաղթ» անվանական կրթաթոշակի համար «Մանկավարժություն և հոգեբանություն» մասնագիտության 3-րդ կուրսի ուսանող Ալբերտ Մարատի Զուրաբյանին, «Գրիգոր Նարեկացի» անվանական կրթաթոշակի համար «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողուհի Մերի Սահակի Սարգսյանին, տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշումը «Սահակ Զորափորեցի» անվանական կրթաթոշակի համար «Սերվիս» մասնագիտության չորրորդ կուրսի ուսանողուհի Օվսաննա Սերյոժայի Գասպարյանին, բնական գիտությունների ֆակուլտետի գիտական խորհրդի որոշումը՝ «Մոնթե Մելքոնյան» անվանական կրթաթոշակի համար «Քարտեզագրություն և կադաստրային գործ» մասնագիտության երրորդ կուրսի ուսանողուհի Նառա Մարտիկի Մնացականյանին, «Համլետ Կարայան» անվանական կրթաթոշակի համար «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» մասնագիտության չորրորդ կուրսի ուսանողուհի Անահիտ Մհերի Հովսեփյանին:

***Արտահայտվեցին*** – Տնտեսագիտական ֆակուլտետի դեկան Ն. Խուդավերդյանը, հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար Ա. Ներսիսյանը, բնական գիտությունների ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար Մ. Զաքարյանը, կիրառական արվեստի ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար, Ա. Մարգարյանը: Նրանք կարևորեցին ԵՊՀ ԻՄ –ում անվանակն կրթաթոշակի հավակնորդների օբյեկտիվ ընտրությունը, որը կարող է նպաստել ուսանողների շրջանում առողջ մրցակցության խթանմանը:

***Որոշեցին***

**Որոշում 18/5**

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 7-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 7-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

Հաստատել հումանիտար գիտությունների ֆակուլտետի գիտական խորհրդի որոշումը՝ «Պատմություն» մասնագիտության երկրորդ կուրսի ուսանող Ալիխան Աշոտի Բալդրյանին 2016–2017 ուստարվա առաջին կիսամյակում նշանակել «Վազգեն Սարգսյան» անվանական կրթաթոշակ՝ պատշաճ կարգապահության և բարձր հասարակական ակտիվության համար:

#### **Որոշում 18/6**

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 7-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 7-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

Հաստատել հումանիտար գիտությունների ֆակուլտետի գիտական խորհրդի որոշումը՝ «Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողուհի Վանուհի Արամայիսի Վանեսյանին, 2016–2017 ուստարվա առաջին կիսամյակում նշանակել «Շառլ Ազնավուր» անվանական կրթաթոշակ՝ հինգ կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմություն ցուցաբերելու, պատշաճ կարգապահության և հասարակական ակտիվության համար:

#### **Որոշում 18/7**

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 7-րդ ենթակետով և Երևանի

**Էջ 8 14-ից**



պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 7-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

Հաստատել հումանիտար գիտությունների ֆակուլտետի գիտական խորհրդի որոշումը՝ «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողուհի Մերի Սահակի Սարգսյանին, 2016–2017 ուստարվա առաջին կիսամյակում նշանակել «Գրիգոր Նարեկացի» անվանական կրթաթոշակ՝ չորս կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմություն ցուցաբերելու, պատշաճ կարգապահության և հասարակական ակտիվության համար:

#### **Որոշում 18/8**

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 7-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 7-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

Հաստատել հումանիտար գիտությունների ֆակուլտետի գիտական խորհրդի որոշումը՝ «Մանկավարժություն և հոգեբանություն» մասնագիտության 3-րդ կուրսի ուսանող Ալբերտ Մարատի Զուրաբյանին, 2016–2017 ուստարվա առաջին կիսամյակում նշանակել «Դավիթ Անհաղթ» անվանական կրթաթոշակ՝ չորս կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմություն ցուցաբերելու, պատշաճ կարգապահության և հասարակական ակտիվության համար:

#### **Որոշում 18/9**

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 7-րդ ենթակետով և Երևանի

Էջ 9 14-ից

պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 7-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

Հաստատել բնական գիտությունների ֆակուլտետի գիտական խորհրդի որոշումը՝ «Քարտեզագրություն և կադաստրային գործ» մասնագիտության երրորդ կուրսի ուսանողուհի Նառա Մարտիկի Մնացականյանին 2016–2017 ուստարվա առաջին կիսամյակում նշանակել «Մոնթե Մելքոնյան» անվանական կրթաթոշակ՝ երկու կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմություն ցուցաբերելու, պատշաճ կարգապահության և հասարակական ակտիվության համար:

#### **Որոշում 18/10**

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 7-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 7-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

Հաստատել բնական գիտությունների ֆակուլտետի գիտական խորհրդի որոշումը՝ «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» մասնագիտության չորրորդ կուրսի ուսանողուհի Անահիտ Միերի Հովսեփյանին 2016–2017 ուստարվա առաջին կիսամյակում նշանակել «Համլետ Կարայան» անվանական կրթաթոշակ՝ երկու կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմություն ցուցաբերելու, պատշաճ կարգապահության և հասարակական ակտիվության համար:

#### **Որոշում 18/11**

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 7-րդ ենթակետով և Երևանի  
Էջ **10 14-ից**

պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 7-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

Հաստատել տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշումը՝ «Սերվիս» մասնագիտության չորրորդ կուրսի ուսանողուհի Օվսաննա Սերյոժայի Գասպարյանին 2016–2017 ուստարվա առաջին կիսամյակում նշանակել «Սահակ Ձորափորեցի» անվանական կրթաթոշակ՝ երեք կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմություն ցուցաբերելու, պատշաճ կարգապահության և հասարակական ակտիվության համար:

***Ընթացիկ հարցեր:***

***Լսեցին*** - «ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի հումանիտար գիտությունների ֆակուլտետի հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնի դոցենտ, պատմական գիտությունների թեկնածու Վարդան Արամայիսի Ալեքսանյանին ԵՊՀ գիտական խորհրդում դոցենտի գիտական կոչում ստանալու համար երաշխավորելու և միջնորդելու» հարցի մասին ԵՊՀ ԻՄ-ի տնօրեն Ս. Ա. Առաքելյանի հաղորդումը:

ԵՊՀ ԻՄ տնօրեն Ս. Ա. Առաքելյանը նշեց, որ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի հումանիտար գիտությունների ֆակուլտետի հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնի 2016թ. սեպտեմբերի 2-ի թիվ 1 նիստում քննարկվել է նույն ամբիոնի դոցենտ, պատմական գիտությունների թեկնածու Վարդան Արամայիսի Ալեքսանյանին դոցենտի գիտական կոչում շնորհելու հարցը և հաշվի առնելով, որ հայցողի գիտամանկավարժական գործունեության տվյալները լիովին համապատասխանում են ՀՀ կառավարության 2001թ. հուլիսի 9-ի «Հայաստանի Հանրապետությունում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու մասին» N 615 որոշման 2-րդ՝ «Դոցենտի գիտական կոչում շնորհելը» բաժնի բ. ենթակետի, ինչպես նաև այդ հարցում նորմատիվային այլ

փաստաթղթերի պահանջներին, նրան երաշխավորել է դոցենտի գիտական կոչում շնորհելու համար և դիմել է ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդին՝ առաջարկելով միջնորդել ԵՊՀ գիտական խորհրդին՝ պատմական գիտությունների թեկնածու Վ. Ա. Ալեքսանյանին շնորհել դոցենտի գիտական կոչում:

Տնօրեն Ս. Ա. Առաքելյանը նշեց, որ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդին կից մրցույթային հանձնաժողովը քննարկել է խնդրո առարկա հարցը և ուսումնասիրելով հայցողի անձնական գործի նյութերը՝ արձանագրել է հետևյալը.

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի հումանիտար գիտությունների ֆակուլտետի հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնի դոցենտ, պատմական գիտությունների թեկնածու Վ. Ա. Ալեքսանյանը ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում տասնհինգ տարի անընդմեջ իրականացնում է մասնագիտությանը համապատասխան գիտամանկավարժական գործունեություն: Վարդան Արամայիսի Ալեքսանյանը թեկնածուական ատենախոսությունը պաշտպանել է 1999թ.: Պաշտպանությունից հետո նա հրատարակել է գիտական 5 հոդված և ուսումնամեթոդական 3 աշխատանք, նա համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. հուլիսի 9-ի «Հայաստանի Հանրապետությունում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու մասին» N 615 որոշման 2-րդ՝ «Դոցենտի գիտական կոչում շնորհելը» բաժնի բ. Ենթակետի, որը նախատեսում է դոցենտի գիտական կոչում շնորհել «գիտությունների թեկնածուի գիտական աստիճան ունեցող անձանց, ովքեր գիտական կոչում շնորհող ԲՈՒՀ-ում ունեն գիտամանկավարժական աշխատանքի առնվազն 3 տարվա ստաժ և վերջին 3 տարվա ընթացքում այդ ԲՈՒՀ-ում իրականացրել են մասնագիտությանը համապատասխան գիտամանկավարժական գործունեություն» կարող է հավակնել դոցենտի գիտական կոչման:

Հաշվի առնելով այդ ամենը կարելի է արձանագրել, որ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի հումանիտար գիտությունների ֆակուլտետի հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնի դոցենտ, պատմական գիտությունների թեկնածու Վ. Ա. Ալեքսանյանի տվյալները բավարար է դոցենտի գիտական կոչում ստանալու համար և կարելի է միջնորդել ԵՊՀ գիտական խորհրդին:

Այնուհետև Ս. Ա. Առաքելյանը գիտխորհրդի քննարկմանը դրեց Վ. Ա. Ալեքսանյանի դոցենտի գիտական կոչում շնորհելու համար ԵՊՀ գիտխորհրդի միջնորդությանը դիմելու հարցը:

*Արտահայտվեցին* – պ.գ.դ., պրոֆեսոր Ա. Ներսիսյանը, պ.գ.դ., պրոֆեսոր Ռ. Նահապետյանը, պ.գ.թ., դոցենտ Դ. Թինոյանը, մ.գ.թ., դոցենտ Վ. Բրուտյանը, պ.գ.թ. դոցենտ Ա. Հովհաննիսյանը,:

Արտահայտվողները նշեցին, որ նա աչքի է ընկնում գիտամանկավարժական և ուսումնամեթոդական աշխատանքների հարուստ փորձով և արհեստավարժությամբ, նրա դասախոսական աշխատանքը բնութագրվում է բարձր մակարդակով և նյութի մատուցման հմտությամբ: Նրանք առաջարկեցին հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնի դոցենտ, պատմական գիտությունների թեկնածու Վարդան Արամայիսի Ալեքսանյանին դոցենտի գիտական կոչում շնորհելու համար միջնորդել ԵՊՀ գիտխորհրդին:

## ***ՈՐՈՇԵՑԻՆ***

### ***Որոշում 18/12***

Հաշվի առնելով, որ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի հումանիտար գիտությունների ֆակուլտետի հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնի դոցենտ, պատմական գիտությունների թեկնածու Վարդան Արամայիսի Ալեքսանյանի գիտամանկավարժական գործունեության տվյալները լիովին համապատասխանում են Հայաստանի Հանրապետության

կառավարության 2001թ. հուլիսի 9-ի «Հայաստանի Հանրապետությունում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու մասին» N 615 որոշման 2-րդ՝ «Դոցենտի գիտական կոչում շնորհելը» բաժնի բ. ենթակետի, ինչպես նաև այդ հարցում նորմատիվային այլ փաստաթղթերի պահանջներին ԵՊՀ ԻՄ գիտական խորհուրդը որոշում է.

1. Երաշխավորել ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի հումանիտար գիտությունների ֆակուլտետի հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնի դոցենտ, պատմական գիտությունների թեկնածու Վարդան Արամայիսի Ալեքսանյանին դոցենտի գիտական աստիճան ստանալու համար,
2. միջնորդել ԵՊՀ գիտական խորհրդին՝ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի հումանիտար գիտությունների ֆակուլտետի հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնի դոցենտ, պատմական գիտությունների թեկնածու Վարդան Արամայիսի Ալեքսանյանին շնորհել դոցենտի գիտական կոչում և համապատասխան առաջարկով դիմել ՀՀ ԲՈՀ:

Գիտական խորհրդի նախագահ \_\_\_\_\_ Ս. Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Գիտական խորհրդի քարտուղար \_\_\_\_\_ Ս. Ս. ԱԹՈՅԱՆ

10.09.2015թ.